

Տարեկան գինը 10 բուլղի. հետ տարվան 6 բուլղի.  
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисе, Редакция «Мшакъ».  
Կամ Tiflis, Rédaction «Mschak».  
Տէլէֆոն № 253.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են  
Խրաքանչիւր բառին 2 կոպեկ.  
Տէլէֆոն № 253.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարեւոր դուրս.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Պատու. Սա է բարեկամութիւնը. Հողաբաժնե-  
ւորութիւնը պիւղերում. Նամակ Բաթումից. Նա-  
մակ Խմբագրութեան. Նամակ Խմբագրութեան.  
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.  
Աւտարակական հանրապետութիւն. Նամակ  
Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒ-  
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

## ԿԱՐԵՒՐ ԳՈՐԾ

Թիֆլիսի հայոց Հրատարակական ընկե-  
րութեան ընդհանուր ժողովը, որ նշանակ-  
ված է այսօր, մայիսի 13-ին, պէտք է  
զբաղվի այդ ընկերութեան քսան երորդ  
ամսական գործունէութեան քննութեամբ:  
Մի հիմնարկութեան քսան տարվայ գոյու-  
թիւնը բնականաբար առիթ է տալիս մը-  
տածելու, թէ որքան նա հասունացել է  
իր գործունէութեան մէջ եւ ինչ շահով  
պէտք է նա առաջ գնայ այսօր:

Նախ եւ առաջ պէտք է արձանագրենք,  
որ ընկերութիւնը ձեռք է բերել մի յայտ-  
նի աստիճան ամբողջութիւն եւ կայուն  
գիւրք: Եթէ չը գրաւենք վերջին տար-  
վայ բաւարար ցուցումները, այլ վերջնէնք  
մի քանի տարիներ թւերը, կը տեսնենք,  
որ, օրինակ, սկսած 1892 թուականից մին-  
չեւ այժմ, ութ տարվայ ընթացքում, ըն-  
կերութեան անդամներ թիւը չէ իջել  
300-ից, իսկ սկսած 1895-ից չէ իջել  
400-ից: Վարչութեան արած ծախքը, որի  
մեծ մասը գործադրվում է գրքերի հրա-  
տարակութեան վրայ, միջին թուով եղել է  
7000 բուլղի: Տարեկան հրատարակվել է  
12—22, միջին թուով 15 գիրք:

Եթէ մի եւ նոյն ժամանակ նկատողու-  
թեան առնելը այն հանգամանքը, որ ըն-  
կերութեան գլխավոր եկամուտը կազմվում  
է անդամաւճարներից եւ հրատարա-  
կած գրքերի վաճառումից, իսկ նուի-  
րատուութիւնները մինչեւ այժմ եղել են  
միայն իրենց բացառութիւններ, այն էլ  
վերջին տարիներում, կը դանք այն եղա-  
կացութեան, որ ընկերութեան գործու-  
նէութիւնը գրված է ժողովրդական  
հիմքերի վրայ եւ հաստատված է հաս-  
րակական համակրութեան եւ աջակցու-  
թեան վրայ:

Նկատելով, որ ընկերութեան ունեցած  
գործունէութեան բաւարար եւ միմիայնա-  
կան կողմն է: Սակայն կեանքի պա-  
հանջները մեծ են այն նպատակնե-  
րի վերաբերութեամբ, որոնց համար հիմն-  
ված է ընկերութիւնը: Իրերի ուսումնա-  
սիրութիւնը ցոյց է տալիս, որ ընկերու-  
թեան գործունէութեան յարատեւութեան  
եւ ուժեղ արտայայտութեան համար ա-  
ռաջիկայում անհրաժեշտ է դեռ մեծ եւ  
բարդ գործունէութիւն, որ պէտք է ծան-  
րանայ թէ ընկերութեան զեկամարնե-  
րի ընթացքը մեր հասարակութեան  
վրայ: Ընկերութեան ներկայ գործու-  
նէութեան մէջ պակաս դեր չէ խա-  
ղում նրա պաշտօնական ոգևորութիւնը  
եւ հոստարակական գործողի զգացմունքը:  
Եւ անկասկած, այդ ոգևորութիւնը պէտք  
է եւ առաջիկայում զեկամարնեւ ընկերու-  
թեան գործերը, որովհետեւ առանց զա-  
ղափարական վերաբերմունքի անկարելի է  
օգտուել գործունէութիւն, սակայն կա-  
րելու է, որ ընկերութիւնը կարողանար  
զբաւել մշտական աշխատանքներ, որով  
գործելով ընկերութեան համար, տալով  
զբաւան երկասիրութիւններ, ընդունակ  
լինէին ապահովել եւ իրանց կեանքը այդ  
աշխատանքով ու այդպիսով աւելի ամուր  
կապել ընկերութեան հետ:

Անդամների ցուցակների ուսումնասիրու-  
թիւնը ցոյց է տալիս, որ զաւառներում  
յայտնի չափով պահանջ կայ ընթերցա-  
նութեան, բայց պակաս են մարդիկ, ո-

րոնք իրանց վրա ներդրութիւն յանձն առ-  
նէին կազմակերպելու ընթերցանութեան  
տարածման եւ գրքեր վաճառելու գործը  
զաւառական խորքերում:

Հրատարակական ընկերութիւնը պէտք  
է միջոցներ որոնի իր ծրագրած ընթեր-  
ցանքի գրքերի շարքերի կամ սերիաների  
կանոնաւոր հրատարակութեան համար:  
Ընդհանուր հրաւերները, ցանկացողներին  
կուսակցութեան չեն կանոնաւոր գոր-  
ծունէութիւն ստեղծելու համար: Անհրա-  
ժեշտ է ունենալ մշտական աշխատաւոր-  
ներ, որոնք կանոնաւոր կերպով ներկա-  
յացնէին հրատարակութեան համար պա-  
տուիրած աշխատութիւնները:

Մեր հրատարակութիւնը պէտք է օգնու-  
թեան գալ եւ ներթափանչու եւ բարոյակա-  
ն իր աջակցութեան կարողութիւն տալ  
ընկերութեան զեկամարններին ընդարձակե-  
լու իրանց գործունէութիւնը եւ գրքերի  
հրատարակութեան ու տարածման գործը  
զարգացնելու կանոնաւոր կազմակերպու-  
թեամբ: Մեր հրատարակական կեանքի ա-  
մենակական պահանջներից մէկն է այդ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱՍԻՍ

Հարգելի հայրն թէ ինչ է «դարձր» եւ նա,  
աշխարհի որ ծայրում էլ ապրելիս լինի, մի եւ  
նոյն հառաչանքներ կարծախէ այդ բառի տակ  
թափված հազար իրողութիւնը բացատրելու  
համար. մի եւ նոյն չեղար, դէպք մի եւ նոյն  
արտայայտութիւնը: Ինչպէս համահարակ ախ-  
տելը միատեսակ տանջանքներ են պատճա-  
ռում մարդկանց, այնպէս էլ պանդխտութիւնը,  
որի նման վարակիչ, համատարած ցաւ հագիւ-  
թէ երբ եւ իցէ տեսած լինի հայ ազգը, միա-  
տեսակ պատմութիւն ունի ամեն տեղ, միա-  
տեսակ կնիք է դրոշմում կեանքի վրայ: Պան-  
դխտական ամեն կողմից են լինում, չը կայ  
հայաբնակ տեղ, ուր օտար աշխարհի գնալու  
սովորութիւնը անպայման լինի: Նախկիններ,  
Շուշին, Նոր-Բայազետը, Մուշը, Սալմաստը  
կը տան ձեզ պանդխտութեան նկարագրու-  
թիւններ, որոնց մէջ դուք կը տեսնէք մի եւ  
նոյն հանգամանքներ. հայրենաձայն անող կարօ-  
տութիւն, զարթիկ վերադարձին կամ նամակին  
մի անտանձն անձկութեամբ եւ ապշեցող  
համբերութեամբ սպասողներ: Բայց պանդխ-  
տութեան ամենամեծ, ամենաթշուառ զոհը հայ  
կինն է: Շատ են նկարագրել այդ կենդանի  
նահապտակի դրութիւնը, շատ են օգտագիւ  
զգացողութիւնը, բայց ամեն անգամ, երբ դուք  
հանդիպում էք մի նոր նկարագրութեան, չէք  
կարողանում իսկապէս չը զգացվել, թէ եւ  
գիտէք որ պատկերը անօրինակ չէ, այլ կրկնու-  
թիւն, որ հարկը ու մի անգամ ձեզ պատանջել  
է տեսնել, լսել, կարդալ մի եւ նոյնը: Զանձ-  
րանայ, այն, չէք կարող, որովհետեւ կեանքի  
մէջ քանի քանի երեւոյթներ կան, որոնք ան-  
թիւ ու անհամար անգամ կրկնվում են: Խօսքի  
առարկայ են դառնում եւ սակայն միշտ թարմ  
ու հրատապ ընկերութիւն են պահպանում,  
որովհետեւ ինչ որ կեանքին է վերաբերում,  
նա չէ կարող անկարելու, ուշադրութեան ա-  
նարժան լինել: Եւ հայ մենք դարձեալ կանգ  
ենք առնում պանդխտութեան գնացած հայ  
աղաքագիր դժբաղդ կնոջ առաջ: «Արեւելք»

Երեք օր առաջ մանկամարդ կին մը ներ-  
կայացաւ Մուշի առաջնորդարանը: Կին չէր  
այն, փողանի մուրաբիկ մը, թախծալից ու  
տխրամած: Մերի էր ան ոտնէ գլուխ: Շինա-  
կան գլխին մոռ ետգծած կտոր կտոր,  
ուրիշից դուրս թափած էին իր չէկիկ մազե-  
րու հիւսքերը: Մերի ու բայ էին անոր սիր-  
տը, ձեռքերը դաստակէն բազուկ, եւ ոտ-  
քեր բոքիկ, որոնք փուլերէն ու քարերէն  
չը բռնէ շարունակ պատռած եւ արհեստա-  
կին: Իր մերկութիւնը առնցքով չէր վեր-  
ջանար: Ան չունէր սրտանոց, չափիկ, թեւ-

նոց, եւ այն: Փուրջերով կարկուտած եր-  
կու կտոր ցնցոտիներով կազմուած էր իր  
մերկածածուկը, որուն տակ ամօթիւն ու  
սրտաբեկ կըսէ էր գեղեցիկ եւ երիտասարդ  
իրանը այդ պատկառող, անկողն հայ կնոջ:  
Չը գիտէի առաւօտեան որ ժամին դիմած էր  
առաջնորդարան իր վիճակը պարզելու. կէս  
օր էր երբ տեսայ զայն, թագնված սրտի  
մութ անկիւն մը, ու կտոր մը թուղթ խնդ-  
րալիք ձեռք, զոր տաքուկ եւ աղի ար-  
տաւելով ջրվելով կը յանձնէր ինծի: Ըն-  
թերցողները չէին ձանձրանար, եթէ պատմեմ  
այս հարմուկին դարձրի:

Հարմուկի դարձրը սովորականից տա-  
րբութիւն են նրանով, որ եղբիւր—այդպէս  
է նրա անունը—ամուսնացել է Թարութի Նետ,  
զրգված ջերմ սէրից: Նա դիտէ որ աղքատ է  
Թարութը, գիտէ որ իր ունեւոր ծնողները  
ոչինչ չեն տայ, քանի որ ինքը սիրում է յը-  
րանց կամքի հակառակ, բայց սէրը այնքան  
ոգեւորում է նրան, որ նա կարծում է թէ աղ-  
քատ ու գրկված էլ նրանք կարող են մի բախ-  
տաւոր զոյգ կազմել: Թարութը փախչում է  
նրան, ամուսնանում է Նետը եւ ապա դուռն է  
պանդխտութիւն, ուր եւ մտնում է իր հա-  
մար այդքան զրկանքներ յանձն առած կնոջը:  
Բայց եղբիւր դարձրի այդ հանգամանքը մի  
աստիճան միայն կարող է նրան զանազանել  
այն բազմաթիւ կանանցից, որոնք ամուսնացել  
են առանց սիրային բռնանքների եւ սակայն  
նուիրել են իրանց ամբողջ կեանքը իրանց  
աղաքագիրներին եւ նրանց պանդխտութեան  
պատճառով նոյն թշուառ դրութեան մէջ են:  
Եւ այդ բոլոր կենդանի նահապտակները մի ճա-  
նապարհ միայն գիտեն: Առաջնորդարան: Բայց  
ինչ կարող է անել առաջնորդը:

Ո՛վ կը հարցնէ զու վիճակիդ վրայ, ապեր-  
ջանիկ կին, կամ զու նմաններուդ: Պաւկ,  
ամուսնութիւն, զուգակցութիւն, այդ ինչ  
գեղեցիկ երազներ էին աղաքագիրները ժա-  
մանակը: Կարգուի, քոյրդ ու գովք առ,  
առաքատի, միշտակ աղաքատի վեց ամիս-  
ները վայելէ Թարութը եւ այնուհետեւ տա-  
նը վեց տարի նստի մոտ առքիդ տակը,  
պաղ թնոյրին բոլորը, միշտակ ու հաւաքիկ  
կիր փեսայիդ, անթիւ, մատրեան, արած-  
դարած ու բազմակարգ: Զիններու մէջ բո-  
քիկ քալէ, անձրեւում դէմ մազերդ փռէ մերկ  
մարմինիդ վրայ, շալկէ մէկ հատիկդ, ու  
դարդէ վարած գեղէ գեղ ընկիր, սեղանի  
փշուրները լրկէ ու դարձեալ առաջ պահէ  
սրտիդ սէրը, աղաչելով ու պաղատելով մե-  
ծին ու փոքրին ետ դարձնել քեզ սրտիդ  
սիրական:

Ո՛րպէս լայն է զու սիրտը, ինչ անհամե-  
մատ համբերութիւն որ սպասի չը գիտի.  
ու դուռն տակաւին առանց մեղսելու ապա-  
հարգանքի խօսք բերէ՞ք չեւ հանք ու կըսես.  
—Դարձրեցէ՞ք զինքը: Թող մերկ ու աղ-  
քատ լինի, կը գաղտնի, կը բանինք եւ Աս-  
տուած կը պահէ:

Անա թող լսէ եկեղեցին, թող լսեն ձեռ  
այ զարիւղ զուգապիները, ու դատա-  
տան ընեն իրենց խղճին հետ:

Այն, այդքան անձնագործ, այդքան մեծա-  
գործ հերոսունեան պարտաւոր են լսեն ամեն-  
քը: Միթէ, ճշմարիտ, մեր աշխարհը այնքան  
թշուառ է, որ առաքելութիւնը ստիպված պի-  
տի լինի արտասուքներ թափել անապատում  
ու խեղդվել այդ արտասուքներից...

## ՍԱՔ Ե ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

(Նամակ Եղարց)

Կոնստանտնուպոլիս եւ փոփոխութեան ենթարկ-  
վեց, հեռադրին անբարեխիղճ համարված ան-  
դամներին ու ծառայողներին եւ պահեցին ան-  
դամներից միայն իրենք քանանայ Իսկէնդար-  
դին: Իսկ զարգացողները միայն մէկին: Թէ  
ինչո՞ւ սրանք մնացին իրանց պաշտօնում: Բն-  
չեւ այժմ զարգացող ոչ ոք չէ իմանում, բայց  
չառ պարզ է, որ երկուսն էլ չղղողորթով բա-  
րեկամներ են ունեցել Աշտու վարդապետի մօտ,  
որոնք ամեն միջոցի դիմել են Կոնստանտնուպոլիս:  
մէջ եւս խռովարարների բուն ստեղծելու հա-  
մար: Այդպէս էլ եղել է. արձակվածների փո-  
խարէն նորերը հրաւիրվել են անդամների  
մէջ մտան այնպիսի քանանանք, որոնք մի-

ջանի տարի առաջ հեռացվել են նոյն պաշտո-  
նից, իբրեւ անարժան մարդիկ, եւ միւս կող-  
մից այնպիսի նոր մարդիկ ընտրվել, որոնք  
երազել անգամ չէին կարող, թէ երբ եւ իցէ  
կոնստանտնուպոլիս չէ՞նք կարող են իբրեւ ան-  
գամ մտնել:

Գրագիրների շարքը մտաւ նախ իբրեւ քա-  
տուղար թեմական բազմաշարք դպրոցի  
դասատուներից: Արեւեան անունով մէկը, որն  
այնքան զաղափար ունի կոնստանտնուպոլիս գոր-  
ծերից, որքան կոչակարը երաժշտութիւնից,  
իսկ միւսների փոխարէն զետեղվեցին ամբողջ  
տարիներով Բագու եւ Շուշի թափառող բաղ-  
դախներ մասնակներ, որոնք անարժան եւ ան-  
պէտք են համարվել դուրսը որ եւ է գործ  
կատարելու եւ այսպէս, այժմ կոնստանտնուպոլիս  
կազմը ապշեցնում է հասարակութեան, ապ-  
շեցնում է, որովհետեւ տեղանքն ու մանուկ-  
ներն են կոչվել պատասխանատու պաշտօննե-  
րի, ապշեցնում է, որովհետեւ քառասունարի  
պաշտօն կատարող անձը մի եւ նոյն ժամանակ  
եւ ուսուցչութիւն է անում թեմական դպրո-  
ցում: Ի՞նչպէս, կը հարցնէ զարգացած ընթեր-  
ցողը, միթէ կարելի է մի եւ նոյն ժամանակ  
եւ քառասունարար եւ ուսուցիչ լինել: Այն, ան-  
կարելին այժմ Շուշին կարելի է դարձնում.  
Ի՞նչեր ասէք չեն անի սեւազգեստներ իրանց  
բարեկամների շահերի համար, հասարակու-  
թեան որ հիմնարկութիւնն ասէք չեն զոհի  
այդ խոնարհ ձեւացողներ իրանց մերձաւոր-  
ների օգտի համար: Եւ այժմ զա իրողութիւն  
է, այն եւս ցաւալի իրողութիւն:

Պատմում են սկանդալները, որ ուսուցիչ  
Արեւեան, իբրեւ շատ բարեխիղճ դաստիա-  
րակ (?), թողնում է իր աշակերտներին դասա-  
րանում ահագին աղմուկ բարձրացնելու եւ  
չտապում է կոնստանտնուպոլիս, կամ թողնում է  
մեծ բազմութիւն կոնստանտնուպոլիս չէ՞նք  
չտապում է դասի. մի խօսքով նա մինչեւ  
այժմ խոստ աղմուկ դաստիարակութեամբ ըզ-  
բաղվելուց յետոյ՝ կամենում է կոնստանտնու-  
յում եւս աղմուկեան դասեր տալ անդամնե-  
րին եւ գրագիրներին (!): Բայց ինչ է անում  
դպրոցի տեսուչը, երբ ուսուցիչն իր պաշտօնը  
անթիւր չէ կատարում, երբ մանուկները զոհ-  
վում են այն կամ այն մասնաւոր հայրենիքի  
Ոչինչ. նա նոյն անտարբերութեամբ շարունա-  
կում է հանդիսատես լինել թշուառացած չղղ-  
ոցի ներկայ անախանձելի վիճակին: Դպրոցի  
մէջ ուսուցիչը դատով չէ պարագլուծ, բայց  
վարում են նրան ոտնիկ, կոնստանտնուպոլիս  
պաշտօնեան իր պաշտօնը չէ կատարում ճշու-  
թեամբ, բայց այնտեղից ստանում է լրիւ ու-  
ճիկ: Արեւօք սա ծաղր է Շուշու կոնստան-  
տնուպոլիս համար, թէ պատուհաս:

Եւ դեռ ասում էլ են, թէ կոնստանտնուպոլիս  
բարեկարգվել է, թէ արժանաւոր մարդիկ են  
ընտրվել գործի վրէժն անցնելու: Եթէ ձեռ  
հասկացած բարեկարգութիւնը զա է, ապա  
անկեալ վիճակը, օգործելի դրութիւնը որն է:

## ՀՈՂԱԲԱԺԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԻՒՂԵՐՈՒՄ

### II

Մեր հողաբաժնեւորութեան ժամանակ մի այս-  
պիսի սկզբունք էր դրած, որ հողը բաժանվի  
հողու վրայ, ինչպէս են արգարութիւնը պա-  
հանջում է, բայց մեր այս տարվայ հողաբա-  
ժանները հենց սկզբից չեղեցին այդ սկզբուն-  
քից: Պէտք է եղել նորից համար, «չարէք»  
կազմել (կարծես առանց դրան չէ կարելի եօլա  
գնալ) եւ ամենափոքր թիւը—երեք հոգին—ըն-  
դունվել է մի արեւիքատկա (համարն գրեւոր  
ընդունված է մի որոշ չափ եւ ունի չորս չա-  
րէք կամ 1/4, իսկ չարէքն ունի 4 արեւիքատկա):  
Այս հաշուով 3 հոգին եղել է երկու արեւիքատկա,  
իսկ 9 անգամ ունեցող ընտանիքը՝ 3 արեւիքատ-  
կա: Ապա ինչ անուն տանք 8 անգամ ունեցող  
ընտանիքին. այստեղ մի անդամն այնքան էլ  
կարեւոր դեր չէ խաղում եւ այդ էլ հաւել է  
9 անգամին—3 արեւիքատկա. գալով 7 անգամ  
ունեցող ընտանիքին, արդէն մէջ է մտել ճեպ-

խի\*) մտիկ տալու» սովորութիւնը, այնպէս որ կան ընտանիքներ, որոնք հաւասարվել են 6-ին, ասվելով 2 արեցատկա, եւ կան ընտանիքներ, որ հաւասարվել են 8—9-ին եւ անհոգի են 3 արեցատկա Ուրեմն 7 անգամ ունեցող եւ 9 անգամ ունեցող ընտանիքները ստանում են հաւասար հողաբաժիններ: Շարունակելով այս հաշիւը, 27 անգամ ունեցող ընտանիքը իր մէջ պարունակում է 9 անգամ 3, ուրեմն նա կը լինի 3X3=9 արեցատկա, իսկ որովհետեւ 7=8-ի, ուրեմն 21 անգամ ունեցող ընտանիքն էլ, որ իր մէջ պարունակում է 3X7 կամ 3X9 (որովհետեւ 7=9) կը լինի էլի 9 արեցատկա: Արդէն այսպիսով 21-ը եւ 27-ը հաւասարվեցին: Ուրեմն եթէ առաջին ընտանիքի 9 հողին հողաբաժին չեն ստանում, պատճառն այն է, որ նա արագին յանցանք է գործել եւ չէ բաժանվել: Դեռ փառք Աստուծո, որ մեր գիւղական ընտանիքներում անհոգիներ չկան: 30-ից չէ անցնում, որովհետեւ եթէ աւելի բազմամարդ ընտանիքներ լինեն, 54 անգամ ունեցող ընտանիքը կը հաւասարվէր 42 անգամ ունեցող ընտանիքին: Ըստ մեր հողաբաժանարարների:

Բաւական է, վերջապէս, որքան համապատասխան իր այժմեան կազմութեամբ գործ կատարեց գիւղերում մէկի տունը քանզիւ, միւսի տունը չլինելով, ժամանակ է ապագայից այդ կարգը չպարտելու եւ նրա տեղ իրականին համապատասխանող միութիւնների ընդունելու: այսպէս, օրինակ, եթէ մենք ընդունենք մէկ անհատը իբրեւ մի միութիւն եւ նրան անուանենք մի արեցատկա, 4 արեցատկան կը դառնայ մի չարեք, իսկ 4 չարեքը, որ կան 16 հողի, մի համախառն, մինչդեռ համախառնեքի այժմեան կազմով 40 հողին է տեղ-տեղ էլ 20 հողին է ընդունված մի համախա, եւ որովհետեւ այդ թւերը չեն արտադրում զուգ թւերի բազմապատկումից, այդ պատճառով էլ բաժանման ժամանակ սխալ է լինում, իսկ 16 հողին ընդունելով մի համախ, այդպիսի սխալ չէ կարող տեղի ունենալ, որովհետեւ 16-ը արտադրում է զուգ թւերի բազմապատկումից:

Ամենապիտան ակերտը պայտէս սոսնակին անհոգի յետոյ ինչ կարելի է սպասել այնպիսի ինքնիշխանի վերաբերմամբ, որոնք վիճակի են: Ցանկալի է նաեւ, որ գիւղացուն կամ իսկական երկրագործին հողը տրվի սեփականութեան ձեռով, որ նա սրտով կաշէ իր հողին եւ նոյն իսկ չարակով պարարտացնէ հողը, որ այսպիսի սակաւութեան դէպքում անհրաժեշտութիւն է, թէ չէ գիւղացին չի համաձայնվի ոչ մի կերպ պարարտացնելու այն հողը, որ է-գործ պէտք է ուրիշին տան, իսկ այն միտքը, թէ բոլորն էլ պարարտացնեն իրանց հողերը եւ բաժանման ժամանակ ինչ փոխ Ա-ի պարարտացրածը Բ-ն կը վարէ, Բ-ի պարարտացրածը Ա-ն, վաղաժամ միտք է եւ գիւղացու տեսակէտից անիրագործելի: Ուստի լաւ կը լինի, որ հողերը տրվին գիւղացիներին անձնական իրաւունքով, եւ եթէ մի քանի տարուց յետոյ մէկ ընտանիք կը բազմանայ, միւսը կը նուազի, այս վերջին ընտանիքին կը տրվի առաջին ընտանիքի այն հողերը, որոնք վրա տեղը աշխատանք չէ արել: Եթէ պատահի, որ առաջին ընտանիքը արդէն պարարտացրած լինի իր բոլոր հողերը, որ դժուար կը պատահի, այդ դէպքում պարարտացրած հողերից կը վերցվի եւ գիւղացին չի արանջայ իր ձեռքի տակի մնացած հողերը պարարտացրած ունենալով:

Մ. Վարդուհանյան

ՆԱՄԱԿ ԲԱԹՈՒՄԻՑ

Մայիսի 10-ին

Ահա մի ամիս է, որ այստեղ գործերը շատ թոյլ են ընթանում: Ընտանիքներում գործերը դադարած են: Վերջերս նոյն իսկ արտասահմանեան նաւթատար չորհրդաւներ շատ հազիւ են լինում, որ մեծ վնաս է թէ քաղաքային եւ թէ առեւտրական չընթանան: Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, որ արտասահմանում նաւթի պահանջը զգալի կերպով իջել է:

Գործերի այդ պակասութիւնն է պատճառը, որ փողոցներում կը հանդիպեք խմորով անգործ թափառելիս գաւառացի բանուորներին, որոնք վառնում են իրանց քրտինքի եւ արտասուքի կաթիլներից գոյացած կոպէկների վերջին մնացորդը: Բանուորներից շատերը նոյն իսկ գրկված են ապրելու միջոցներից, չնոր-

\*) Նախ նշանակում է օձիք, եսիսին մտիկ տալու կարողութեան որակ:

հիւ անգործութեան: Գաւառներում, եթէ հունձի, կալ ու կուտի ժամանակը լինէր, բանուորները չափաւր պատրաստ կը լինէին վերադառնալ հայրենիք: Բայց ներկայումս ինչպէս մէջ թաղված ընտանիքը՝ մի աւելորդ բեռ լինելու:

Հարստահարութիւնը, կաշառակերութիւնը կարծես մեր տարաբաղ զինուոր անբաժան եղբայրներն են: Խաւար ու յետ ընկած գիւղում նրան հալածում, կեղծում է գիւղական վախառուն կամ դատաւոր, մինչեւ պանդխտութեան դուռ հասնելը: Գալով քաղաք, գիւղացին անմիջապէս գործ չէ կարողանում գտնել: Աղաչանք, սրան նրան դիմել—խնդրելը չեն օգնում, մասնաւոր երբ գործերի փոքր չափէ պակասութիւնն է զգացվում, ինչպէս որ ներկայումս է: Այն ժամանակ ձաւոր այն է լինում, որ կաշառակերութեան սուրբ գիւղացին զանազան «փեղեկներով» գիւղում է գործակատար խաչելներին: Եւ մի կերպ գործի մտնում, թէկուզ ամենաչին վարձով, գոնէ օրէջոր աւելացող պարտքերից նա ազատ է դուրս գալու:

Բայց կան եւ այստեղ որոշ տիպի անհասարակութիւններ, որոնք ձեռքի տակ աւելի անխղճօրէն հարստահարվում է մշակ եւ բանուոր դասակարգը: Դրանք զանազան «փողոցներ» են, որոնք ոչ մի միջոց ձեռքից բաց չեն թողնում աւելի եւս հարստահարելու առանց այն էլ ամեն մի գրկանքների ենթակայ մշակ եւ բանուոր դասակարգը:

Բ. Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Միջախ, ապրիլի 30-ին

«Մշակ» 66-րդ համարում պ. Գրիգորեանցի թղթակցութեան մէջ յայտնված է, որ Ժրթականների ընդհանուր ժողովը որոշել է դատ բանալ իմ դէմ, որովհետեւ իբր թէ ես հաշիւ չեմ ներկայացնում եկեղեցական գումարների համար հաստատված վերաստուգող յանձնաժողովին:

Յիրաւի եւ էլ, իբրեւ նախկին երէցփոխ, պէտք է հաշիւ տամ յիշեալ յանձնաժողովին, սակայն ոչ թէ ես եմ մեղաւոր, այլ յանձնաժողովի անդամների ծուրութեան եւ երկպառակութեան պատճառով գործը մնացել է առկալ գործիւն: Եւ միւս կողմից, ամեն ոք կարող է վկայել, որ այդ անդամները միմեանց հետ այլ եւ այլ անձնական հաշիւներ ունենալով՝ իւրաքանչիւրը ըստ իր ցանկութեան վըճիւններ է կայացնում եւ ամեն ոք աշխատում է իր բարեկամին զերծ պահելու հաշիւ տալուց, որի պատճառով եւ հասել են այն եզրակացութեան, որ Ամիրխանեանը հաշիւ չէ տալիս եւ պէտք է նա միայն դատի հրաւիրվի:

Եւ ինչու որ եմ թղթակցից աշխատեմ հանել գործակալ Արշակ քահանայի կամ ուրիշների հաշիւը, որոնք մինչեւ այսօր ոչինչ չեն ցոյց տուել, նրանք ինձինք առաջ են եղել եւ դրանց համար էլ հողերու ատեսներ կարգադրութիւն է արել, պատուիրելով քննել 1888 թւից եղած հաշիւները:

Ա. Ամիրխանեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Սեւան, մայիսի 7-ին

Նորերս Օղեսայում վարձանված եւ Բագու տեղափոխված բազմաթիւ յայտնի հարուստ վաճառական Ենոք Բուրդուղեանցի թողած բազմադրեան կտակի հետ ծանօթ են արդէն «Մշակ» ընթերցողները:

Ձը նայելով յիշեալ պատկանելի կտակին, հանդուգնալի յարգելի եղբայրները իրանց եղբոր անուանալի յիշատակին նորից զանազան հիմնարկութիւններին նոր նոր գումարներ են նուիրում, որոնց թիւում բարեհաճեցին նուիրել նաեւ Սեւանի հնադարեան միջնադարի վերաշինութեան երկու հազար բուրջի, որի համար յայտնում ենք մեր խորին չորհրդակալութիւնը յարգելի նուիրատուներին:

Այսօր, պատարագից յետոյ, հանդիսաւոր հոգեհանգիստ կատարվեց հանդուգնալի յիշատակին և Աստուծոյ անմահ եկեղեցում, ուր ներկայ էին Սեւանի ամբողջ միջնադարի բնակիչ հանդիսականները:

Վանանայր՝ Սարգիս վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այսօր, մայիսի 13-ին, երեկոյան 7 ժամին մինչեւ 8-ը, Թիֆլիս կը ժամանէ նորին մեծութիւն պարսից Շահի երկաթուղու կայարանից, որտեղ կը դիմաւորեն Նրան երկրի բարձր իշխանութիւնը եւ Թիֆլիսի քաղաքային վարչութեան անդամները՝ քաղաքագլխի հետ միասին, Շահը կառքով կը գնա իշխանեան կառավարչապետի պալատը, անցնելով Վոլգայայա, Սագովայա, Միխայիլովկայա փողոցներով, Միքայէլեան

կամուրջով եւ ապա Բարիատինսկայա փողոցով եւ Գոթլիխսկի պրոսպեկտով, որոնք լուսաւորված կը լինեն եւ զարդարված դրոշակներով եւ կանաչով: Պալատում Շահի գալուստը կողջունեն զինուորական եւ քաղաքացիական վարչութիւնների բարձր աստիճանաւորները, քաղաքային խորհրդի ձայնաւորները եւ քաղաքացի պատաւոր անձինք: Շահի չը՝ քաղաքի համար, որ բաղկացած է 40 անձերից, իջեալ է պատրաստած «Օրիանտ» եւ «Կալկադ» հիւրանոցներում եւ պարսից հիւպատոսարանում: Նորին Մեծութիւնը քաղաքում եղած ժամանակ կը նայէ Թիֆլիսի նշանաւոր տեղերը եւ կայքից մի քանի դպրոցներ, Թիֆլիսից Շահը կազմակերպի Վաղիկավազ, իսկ Վոլգայի վրայով դէպի արտասահման:

Մեզ հաղորդում են, որ երկրագործութեան միջնադարի ժամանակահատուկ հանգուցեալ Յ. Խաթիսեանի անունով թոշակ այգեգործական դպրոցում որդեգիր պահելու համար, որոշել է այդ թոշակը հաստատել ի պատու Խաթիսեանի գործունէութեան կողմանակ Պիւղա-անտանական ընկերութեան մէջ՝ իբրեւ նրա փոխ-նախագահի:

Քաղաքում տեղեկութիւն է ստացված, թէ Ջիւատուրի մարզանցի հանքերում բանուորների մէջ երեւացել է որովայնային տիֆ: Տեղական իշխանութիւնները եռանդով աշխատում են այդ վտանգաւոր հիւանդութեան առաջն առնելու համար:

«КАВКАЗ» լրագիրը ստացել է հետեւեալ հեռագիրը Բաշորայէնից, մայիսի 11-ից. «Երէկ, Բաշորայէնը, նորին մեծութիւն պարսից Շահի գալուստն առիթով, փառաւորապէս լուսաւորված էր. ամեն տեղ չըջում էին ժողովրդի խմբեր: Բաշորայէնում դիշերուց յետոյ՝ Մուզաֆֆեր-է-Գիլի Շահը ուղեւորվեց Երեւան՝ բազմաթիւ շքանշաններով եւ այն անձանց հետ, որոնք եկել են նրան դիմաւորելու: Այսօր, երեկոյան, պարսից Շահը ժամանեց Երեւան: Նորին մեծութեանը դիմաւորեցին մեծ հանդիսով: Ամեն տեղ տեսնվում են ժողովրդի խումբ խմբեր»:

Այս տարի երկրագործութեան միջնադարի կողմանակ լրագործի գիւնատան երկու պաշտօնեաներ ուղարկվում են արտասահման—ազրոնով Ա. Փիլիպեան՝ Պարսից ցուցահանդէսը եւ ազրոնով իշխան Բ. Անդրեւիկով՝ Ֆրանսիա եւ Ալժիր՝ այգեգործութիւն ուսուցանելու նպատակով:

ՇԻՐԱԿԻՑ մեզ գրում են. «Շիրակի վիճակի մէջ գտնվում է Կարմիր վանք գիւղը, որի բնակիչները թւում 20 տուն են, ամենքն ունեն բաւական միջոց եւ լաւ ապրում են: Գիւղի մէջ կայ մի փոքրիկ վանք. որ չինված է սրբապատը կրամբը քարից, եւ այդ պատճառով էլ գիւղը կոչվում է Կարմիր վանք: Այդ վանքի քանդված մասերը եւ կարկաստները չեն եւ տուել իր սեփական ծախսով նոյն գիւղացի տէր-Սալաթիէլը, որ այժմ տնով տեղափոխվել է Կարս: Վանքը շատ գեղեցիկ տեսք ունի. քահանայի արած գոհողութիւնը մեծ է եւ յիշատակ արժանի է ուշադրութեան»:

ԳԱՐՎԱՆԱՐԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Մեր գիւղացիները, տեղում հեռագրատուն բանալու համար, պատալին վարչութեան պահանջը կատարել յանձն առան. սակայն ահա մօտ մի տարի է ոչինչ լուր չունենք, թէ եւ այս ժամանակ երկրագործութիւնները փոխանակվել են պատշաճաւոր իշխանութեան մէջ»:

ԱՐԳԻՆԱՅԻՑ մեզ գրում են. «Շիրակում կան երկու հանքային ջրեր, առաջինը գտնվում է Արգինայում, Կարս գետի ափում եւ միւսը Ղալախչախ գիւղում, Դարբասան գետի ափում: Արգինայի հանքային ջուրը այն յարմարութիւնն ունի, որ այնտեղ կան շատ պատարաւոր իջեւաններ, ուր ջրերը այցելող մարդիկ նեղութիւն չեն կրի, եւ նոյնպէս կարելի է գտնել կեանքի ամեն տեսակ յարմարութիւններ: Գիւղը կարող է ծառայել ամառանոցի տեղ, լաւ օդ եւ ջուր ունի, առհասարակ Արգինայ եկող մարդիկ գոհ կը լինեն թէ առողջապահական տեսակէտից եւ թէ կեանքի այլ եւ այլ գուրադութիւններից: Մեզանում ամեն բան գտնվում է, ընթերցանութեան համար ինչ տեսակ գիրք ասես, որ չը ճարվի, լրագիրները նոյնպէս, միայն «Մշակ» լրագիրը այս փոքրիկ չընթանում ստացվում է 6 օրինակով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՌԱՐԱՐԱՐԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՆ

Մինչ մի կողմից Անգլիան աշխատում է նուազել եւ իրան ենթարկել հարաւ-աֆրիկական երկու անկախ հանրապետութիւնները, միւս կողմից նա այժմ հարկադրված է ճանաչել եւ ընդունել իր սեփական աւստրալիական գաղթականութիւնները, իբրեւ առանձին կաղմակերպված պետութիւն, որ, համարեա, խնդրում է իր բոլոր կազմը մայր-հայրենիքի հետ: Հեռագիրը մօտ օրերումս հաղորդեց արդէն, որ անգլիական պարլամենտը չնչին փոփոխութեամբ եւ առանց քուէարկութեան ընդունեց աւստրալիացիների կողմից առաջարկված օրինագիծը աւստրալիական ֆեդերացիայի կամ, ինչպէս անուանված է օրինագիծի մէջ, աւստրալիական հանրապետութեան նոր կազմակերպութեան վերաբերմամբ:

Աւելի քան քսան տարի սրանից առաջ Անգլիայի աւստրալիական ինքնավար գաղթականութիւնները մտադրվեցին միանալ եւ կազմել մի ֆեդերացիա, մի պետութիւն, որ կառավարվէր ինքնուրոյն կերպով եւ կախված չը լինէր անգլիական կենտրոնական իշխանութիւններից: Երկար տարիներ աւստրալիացիների ջանքերը ապարդիւն էին անցնում. գաղթականութիւնների տեղական պարլամենտները ոչ մի կերպ չէին կարողանում համաձայնվել միմեանց հետ օրինագիծի այս կամ այն կէտի վերաբերմամբ: Վերջապէս 1897 թւին գաղթականութիւնները, ընդհանուր համաձայնութեամբ, կազմեցին մի օրինագիծ եւ երկու անգամ ենթարկեցին նրան ժողովրդական ընդհանուր ձայնատուութեան referendum-ի, որով եւ օրինագիծը ընդունվեց ամբողջութեամբ: Հինգ պատգամաւորների ընտրված հինգ գաղթականութիւնների կողմից, բերին այդ օրինագիծը Անգլիա եւ ներկայացրին գաղթականութիւնների միջնադար Զեմբեր-լէնին:

Օրինագիծը կազմված է երկու գլխաւոր մասերից. առաջին մասում ամփոփված են այն յօդուածները, որոնցով անգլիական պարլամենտը ընդունում է ձայնաւոր էլ աւստրալիական հանրապետութեան իրաւունքները, իսկ երկրորդը բաղկացած է այն սահմանադրական օրէնքներից, որոնցով պէտք է կառավարվի հանրապետութիւնը: Օրինագիծը փոխում է նոյն իսկ անունները՝ Հինգ առաջին յօդուածով սահմանվում է «հասարակ տեղութիւն» կոչումը, իսկ 6-րդ յօդուածում ասված է, թէ «գաղթականութիւն» տեղանքը վերացվում է իսպառ եւ նոր-հարաւային Ուէլսը, Նոր Զելանդիան, Կվինսլանդը, Տասմանիան, Վիկտորիան, Արեւմտեան Աւստրալիան եւ Հարաւային Աւստրալիան պէտք է կոչվեն այսուհետեւ «չտասման» նահանգներ: Օրինագիծը առաջին մասի 25—30 յօդուածների զօրութեամբ «աւստրալիական հանրապետութիւնը անսահման իրաւունք ունի հրատարակել որպիսի օրէնքներ էլ կամենայ գաղթականների եւ նրանց քաղաքական իրաւունքների վերաբերմամբ հանրապետութեան շտապներում»: Ուրիշ խօսքով՝ հանրապետութիւնը իրան է վերապահում այն իրաւունքը, որ Անգլիան աշխատում էր խըրլի Տրանսվալից եւ որի պատճառով ծաղից հարաւ-աֆրիկական պատերազմը Բացի դրանից աւստրալիական հանրապետութիւնը իրաւունք ունի ինքնուրոյնաբար յարաբերութիւններ սկսել ինքադ-Ուլիանսի օտարագրի գաղթականութիւնների հետ եւ առեւտրական դաշնագրեր կապել: Ըստ իր բարեհայեցողութեան, օտար պետութիւնների հետ:

Հանրապետութիւնը ունի իր սեփական ցամաքային եւ ծովային զօրք եւ օրինագիծը առաջին մասի II գլխում յիշված է, որ «աւստրալիական հանրապետութեան զինուորական ուժերի գերագոյն իշխանութիւնը ամբողջապէս պատկանում է ֆեդերացիայի պարլամենտին»: Օրինագիծի առաջին մասի III-դ գլխում գտնվում է այն 74-րդ յօդուածը, որ երկար տարածաշրջաններին եւ բանակցութիւնների առիթ դարձաւ աւստրալիական պատգամաւորների եւ Զեմբեր-լէնի մէջ:

Այդ 74-րդ յօդուածի միտքը, ասում է «Россия» լրագիրը, կարելի է հասկանալ ի նկատի առնելով միայն Անգլիայում այժմ գոյութիւն ունեցող բողոքարկու դատարանների կազմակերպութիւնը: Անգլիական մայրերի կամ առեւտր լորդերի ժողովը դատարանական գործառնութիւնը յանձնված է մի առանձին տրիբունալի՝ առեւտրի, որ կազմված է վեց



